ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13.02.2015

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունների առաջադրում /Զեկ. Վ. Ալեքսանյան/:
2. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ օրակարգի առաջին կետի վերաբերյալ Վ. Ալեքսանյանը հանգամանալից ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնորդներին ներկայացվող պահանջները: Կարևորվեց ուսանողի ակադեմիական բարձր առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը: Նշվեց, որ մասնաճյուղի ուսխորհրդի կողմից մշակվել է ուսանողի հասարակական ակտիվությունը բնութագրող կարգ: Այնտեղ որոշակիորեն սահմանված են այն չափանիշները, որոնք բնութագրում են ուսանողի հասարակական ակտիվությունը: Վերջին շրջանում առավել բարձր առաջադիմություն են ցուցաբերում «Ֆրանսերեն լեզու և գրականություն» և «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսանողները: Ըստ սահմանված չափորոշիչների՝ ֆակուլտետում անվանական կրթաթոշակի հավակնորդների թիվը ութն է, սակայն նրանցից երկուսը նախորդ կիսամյակներում արժանացել են անվանական կրթաթոշակի:

Վ. Ալեքսանյանը «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու առաջարկեց «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ժաննա Ղալթախչյանին: Նա վերջին 2 կիսամյակներում անընդմեջ ունեցել է գերազանց առաջադիմություն և բավարար չափով մասնակցել է ուսանողական հասարակական աշխատանքներին:

Վ. Ալեքսանյանը առաջարկեց «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Վանուհի Վանեսյանին ներկայացնել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի: Նա վերջին 2 կիսամյակներում անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ակտիվորեն ներգրավված է ուսանողական

հասարակական միջոցառումներում, ֆակուլտետի ուսխորհրդի նախագահն է, կուրսի ավագը: Նրա նախաձեռնությամբ և մասնակցությամբ մասնաճյուղում կազմակերպվել և հաջողությամբ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ:
Առաջարկվեց «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Դովլաթբեկյանին էլ ներկայացնել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի: Վերջինս 2 կիսամյակ անընդմեջ ունի գերազանց առաջադիմություն, կուրսի ավագն է և մի շարք ուսանողական միջոցառումների հեղինակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը: Խորհրդի անդամները իրենց խոսքում հավանություն տվին առաջարկվող թեկնածուներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դիմել մասնաճյուղի գիտական խորհրդին՝ հաստատելու ՀԳ ֆակուլտետից ներկայացված անվանական կրթաթոշակի ներքոհիշյալ թեկնածուներին.
- Ժաննա Ղալթախչյան-«Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ
- Վանուհի Վանեսյան-«Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ
- Ջուլիետա Դովլաթբեկյան--«Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ղևոնդյան